ՀՏԴ 82.176(479.25)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՐԻՆՅԱՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Սոկրատ Խանյան
բ. գ. դ., պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

Անոտացիա

Սույն հոդվածը նվիրված է գրականագետ-ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի գրական հայացքներին, առանձնապես գեղարվեստական գրականության փիլիսոփայության նրա ընկալմանն ու մեկնաբանմանը: Նշվում է, որ ականավոր գիտնականի հասկացությունները գրականության փիլիսոփայության վերաբերյալ առնչված են մի կողմից հին աշխարհի փիլիսոփա Արիստոտելի «Պոետիկա» աշխատությունը, մյուս կողմից գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչներ Էմանուել Կանտի, Յոհան Ֆրիդրիխ, Ֆրիդրիխ Շելլինգի, Գեորգ Հեգելի, Լյուդվիգ Ֆոյերբախի ուսումնասիրություններին: Ընդգծվում է նաև Սարինյանի վերաբերմունքը Իպոլիտ Տենի գեղարվեստի փիլիսոփայության հիմնախնդիրներին:

Ս. Սարինյանը բարձր է գնահատել առանձնապես ռուս հանճարեղ գրականագետ Վ. Բելինսկու հայացքները գրաքննադատության վերաբերյալ: Նա դիմել է նաև հայոց ազգային մշակույթի անվանի գործիչների երկերին, արդյունքում հրատարակելով «Գրականության փիլիսոփայությունը» հանրահայտ աշխատությունը, որը գործառական մեծ նշանակություն ունի գրականության մասնագետների համար:

Բանալի բառեր՝ *Սերգեյ Սարինյան, գրականության փիլիսոփայություն, Արիստոտել, «Պոետիկա», գերմանական դասական փիլիսոփայություն, Բելինսկի, Դավիթ Անհաղթ, Իպոլիտ Տեն, ազգային մշակույթ, հայ դասական և նորագույն շրջանի գրականություն, գրականության փիլիսոփայության սարինյանական մեկնաբանություն:*

Գրականության փիլիսոփայության սարինյանական ընկալումն ու մեկնաբանումը գալիս է անտիկ աշխարհի անմահ գիտնական Արիստոտելի գիտական խիզախումներից՝ առանձնապես նրա բազմաբովանդակ «Պոետիկա» աշխատությունից:

Սակայն Ս. Սարինյանի մարգարեական վերաբերմունքն արիստոտելյան իմաստասիրությանն առնչված է նաև հայոց հանճարների պատգամներին: Խորապես յուրացնելով մեր ժողովրդի ինտելեկտուալ կարողություններով օժտված մեծերի նվաճումները հունական փիլիսոփայության բնագավառում՝ ակադեմիկոս Սարինյանը նրանց շարունակողների շարքը զարդարող մեծ երախտավորներից է: Նա քաջածանոթ է եղել 5-6-րդ դարերի հսկաներից մեկի՝ Դավիթ Անհաղթի, 7-րդ դարի հանճարեղ գիտնական Անանիա Շիրակացու, 11-րդ դարի երևելի մշակութային գործիչ Գրիգոր Մագիստրոսի, 12-րդ դարի զարմանահրաշ գիտնական-բանաստեղծ Հովհաննես Սարկավագի երկերին: Նա յուրացրել է հայ փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչներ Վահրամ Ռաբունու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Սիմեոն Ջուղայեցու, Ստեփանոս Լեհացու արիստոտելյան գաղափարաբանությունը: Եվ ոչ միայն այդ: Խորանալով նրա գրականագիտական ուսումնասիրությունների մեջ՝ ուրախության թևավորող պահեր ես ապրում իմացության այն գանձարանի անսպառ շերտերից, որ նա ծածանել է վերածնության եվրոպական

ժամանակաշրջանի հանրագիտարանային գիտելիքների տեր անհատականությունների խորհուրդները, բարձր գնահատել ֆրանսիական կլասիցիզմի չինացող տեսաբան Նիկոլա Բուալոյի ՝Քերթողական արվեստ՝-ը:»Գերմանական դասական փիլիսոփայության յուրացման ուղղությամբ Սարինյանը երևի մրցակից չունի հայ իրականության մեջ: Մեծ գիտնականի աշխատությունները կարդալուց հետո, երբ զրուցում էիր հետը, զարմանում էիր նրա յուրացումներով Իմանուիլ Կանտի, Յոհան Ֆիխտեի, Ֆրիդրիխ Շելլինգի, Գեորգ Հեգելի, Լյուդվիգ Ֆոյերբախի իրար հակասող, բայց և այնպես դասական փիլիսոփայությունը նոր աստիճանի բարձրացնող սկզբունքներից ու օրինաչափություններից: «Չմոռանանք,- ավելացնում էր նա, - որ 19-րդ դարի 40-ական թվականներին Գերմանիայում առաջացավ մարքսիզմը: 1840-ական թվականներին Կ.Մարքսը և Ֆ.Էնգելսը մշակեցին նոր աշխարհայացքի հիմնարար սկզբունքները»: Նա անմիջապես ավելացնում էր. «Մարքսի և Էնգելսի ուսմունքն ինչքան էլ քննադատեն, մեր օրերում չընդունեն նրանց կռահումները ապագա հասարակական նոր կացութաձևի ստեղծման ճանապարհին, միևնույն է, բարձր է գնահատվելու այդ հանճարեղ գործիչների ուսմունքը գրականագիտության բնագավառում»:

Հնարավոր չէր չընդունել ակադեմիկոսի այդ ճշմարիտ ու անհրաժեշտ դիտարկումները Մարքսի և Էնգելսի գրական հայացքների վերաբերյալ:

Ս.Սարինյանը մի առանձին հիացմունքով էր մեծարում ռուսական հեղափոխական դեմոկրատիայի ռահվիրաներ Վիսարիոն Բելինսկու, Նիկոլայ Չերնիշևսկու, Նիկոլայ Դոբրոլյուբովի, Ալեքսանդր Գերցենի, դրանց շարքում նաև Միքայել Նալբանդյանի նվաճումները, ընդգծում նրանց ուսմունքի գործառական նշանակությունը համաշխարհային գրական մտքի զարգացման ասպարեզում: Նրանց գաղափարների յուրացման ու կիրառման ուղղությամբ Սարինյանն ընդգծում էր Հ.Թումանյանի, Ավ.Իսահակյանի, Վ.Տերյանի, Ե.Չարենցի, Պ.Սևակի անունները:

Ս.Սարինյանի մտերիմ ընկերներն ու նրա ասպիրանտները երևի կհաստատեն»մեր այն վկայությունը, որ Ս.Սարինյանի համար անժխտելի մեծություն էր ֆրանսիացի փիլիսոփա, գրող, գեղագետ, գրաքննադատ, պատմաբան Հիպոլիտ Տենը՝ որպես նատուրալիզմի գեղագիտական տեսաբան և կուլտուր-պատմական դպրոցի հիմնադիր: Նա առաջարկում էր անպայման կարդալ և կոնսպեկտավորել Տենի «Գեղարվեստի փիլիսոփայություն» աշխատությունը: Ապա ընդգծում էր, որ ըստ Տենի, գեղարվեստական ստեղծագործությունը ծնվում է հիմնական երեք գործոններից՝ «ռասա», «բնական միջավայր» և «պատմական պահ», որոնք ստեղծում են տվյալ դարաշրջանի «բարոյական ջերմաստիճանը», «մտքերի վիճակը»: Նա առանձնապես նշում էր, որ գիտական հետազոտության խնդիրը Տենը համարում է «գրական փաստերի» շարադրումը և այդ փաստերի առաջացման ուսումնասիրությունը:

Այս գնահատականից հետո Սարինյանն ավելացնում էր, որ գրականագիտությունը ևս պատմական երևույթ է, փոփոխվում է, զարգանում, միևնույն է, Տենի ուսմունքը առինքնող կողմեր շատ ունի, որոնք պետք է անպայման յուրացնել:

Ս.Սարինյանն ուշի ուշով հետևում էր քննադատության պատմության զարգացմանը ռուսական իրականության մեջ: Գիտեր նրա պատմական փուլերը, նվաճումներն ու բացթողումները, բարձր էր գնահատում արդի ռուսական»գրականագիտությունը:»

Ահա թե որտեղից էր բխում գրականագետ Ս.Սարինյանի գիտելիքների հարուստ պաշարը, որն իր հերթին նպաստում էր ոչ միայն հայ, այլև եվրոպական»քննադատական մտքի զարգացմանը:

Գիտելիքների այդ հարուստ ու անսահման պաշարի արդյունքն են այդ հզոր գրականագետի «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ», «Ռաֆֆի», «Պերճ Պռոշյան», «Սրբուհի Տյուսաբ», «Հայկական ռոմանտիզմ», «Մուրացան», «Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը», «Գեղարվեստական գրականության պատմականությունը», «Ատոմ Յարճանյան. Սիամանթո», «Վահան Տերյան», «Սերունդներ և ավանդներ» և այլ աշխատություններ, որոնց հիմնական ատաղձը գրականության փիլիսոփայության բացահայտումն ու նորովի մեկնաբանությունն է հայ իրականության մեջ:

Սարինյանի զարմանահրաշ հիշողության ու գիտելիքների անեզերք կուտակումների շնորհիվ լույս աշխարհ եկան «Հայ նոր գրականության պատմության» հինգ հատորները, որոնց ներածական մասը գրել է ինքը, ինչպես նաև առանձին գլուխներ՝ նվիրված հայ դասական գրականության փուլային զարգացմանը:

Ինչ վերաբերում է «Հայ քննադատության պատմություն» կոլեկտիվ երկհատրոյա ձեռնարկին, կարող ենք ընդգծել, որ առանց նրա հազիվ թե ստացվեին նման ուղենիշ-ուսումնասիրություններ, որոնց հիմնական մասը գրել է ինքը: Պատահական չէ, որ նրա այդ պատմական ծառայությունը բարձր է գնահատվել Հայաստանի իշխանությունների կողմից:

Մենք այստեղ նշել ենք Սարինյանի գրական այն աշխատությունները, որոնք ստեղծել է մինչև 1985 թվականը՝ այն նկատառումով, որ կրկին ու կրկին համոզվենք ու բարձրաձայնենք տարիների հետ գրականագետ-ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի ավելի պայծառացող անմրցակից միտքը, որի փայլատակումն սկսվել է 20-րդ դարի 50-ական թվականներից:

1988-1989 թվականներին սկսեցին հրատարակվել մեծ գիտնականի «Հայոց գրականության պատմության երկու դարը» հոդվածների և ուսումնասիրությունների ստվարածավալ հատորները, որոնց թիվը հասնում է յոթի: Քիչ է ասել, որ այդ հատորներում անվանի գիտնականը ներկայացրել է հարցադրումների լայն շրջանակ 19-20-րդ դարերի հայոց գրականության հանգույցների, արդի գրական ազգային գաղափարաբանության, դասական արժեքների վերագնահատման, գրականագիտության մեթոդաբանության և տեսական այլևայլ դրույթների պատմաքննական վերլուծություններ:

«Հայոց գրականության երկու դարը» ժողովածուի երրորդ հատորը լույս է տեսել Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ և հովանավորությամբ: Գրքի առաջաբանը՝ «Գրականագետը» խորագրով, գրել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավագ Խաչատրյանը: Երախտագիտության խորին զգացումով նա ընդգծում է. ՝Մի անընդունելի, ինչ-որ տեղ զարմանալի ավանդույթ է ստեղծվել. գրականագետը տասնյակ հատորներ է գրում գրողների ու գրականության խնդիրների մասին, ուրվագծում, ցույց տալիս գրականության զարգացման ուղիները, մինչդեռ իր մասին լավագույնս գրված գրքի գրախոսական կամ ծննդյան հոբելյանի առիթով ասվելիք ընդհանուր խոսք... Բա էլ ուր մնացին նրա գիտական ձեռքբերումները, վաստակի առանձնահատկությունները, բերած նորությունները, որոնք մասսայական ընթերցողին անհայտ են մնում (Ս.Սարինյան, Հայ գրականության երկու դարը, Երևան, 2002, էջ 3):

Այս, հիրավի, տեղին կարծիքին կարող ենք ավելացնել, որ Ս.Սարինյանն այն հսկա կաղնիներից է, որի հաստությունը երևում է միայն կտրելուց հետո:»

Հետաքրքիրն ու ընդգծելին այն է, որ նշյալ երրորդ հատորում զետեղվել են այնպիսի գիտական աշխատանքներ, որոնք լուսաբանում են պատմության և տեսության հարցեր, անդրադարձներ, գրական երկխոսություններ, որոնցում մի կողմից երևում է Սարինյանի

գրական հայացքների հզորությունը՝ առնչված վեպի ժանրի պատմության և տեսության հարցերի, «Վերք Հայաստանի» վեպի պոետիկայի, քրիստոնեությունը հայ լուսավորական մտքի գնահատումների, Լևոն Շանթի առասպելական վարպետության, Իսահակյանի աշխարհայացքի ակունքների, Վահան Տերյանի հայտնության, Պարույր Սևակի բանաստեղծական պատկերի դիալեկտիկայի և այլ երևույթների մասին, որը կարող է ի հայտ բերել ու փիլիսոփայորեն մեկնաբանել Ս. Սարինյանը: «Հայոց գրականության երկու դարը» գրքի չորրորդ հատորը ևս լույս տեսավ «Հրաչյա Աճառյան» համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ ու միջոցներով: Այն բացվում է Սարինյանի «Գրականության փիլիսոփայությունը» բազմաշերտ աշխատությամբ: Անդրադառնալով Շելլինգի «Գեղարվեստի փիլիսոփայություն» աշխատությանը՝ հայ գրականագետը հասնում է Իպոլիտ Տենի գեղարվեստի փիլիսոփայության հիմնախնդիրներին, գնահատում Ալբերտ Քամյուի ուսումնասիրությունը Դոստոևսկու»կերպարաարվեստի մասին, ներկայացնում գրականության փիլիսոփայության հասկացությունը հայ իրականության մեջ: Նա մատնանշում է Արսեն Տետերյանին, որը հանդես է եկել 20-րդ դարի սկզբին: Ցույց տալով Տերտերյանի բացած ծիրը՝ Սարինյանն ընդգծում է. «Հետագայում գրականության փիլիսոփայությունը» չձևավորվեց որպես գրականագիտական ուրույն ուղղություն: «Գենետիկ մեթոդը» ուղիղ գծով վերաճեց սոցռեալիզմի գրական քաղաքականության՝ գրականության «մասին գիտությունը համադրելով գռեհիկ սոցիոլոգիզմի չափանիշներին» (Նույն տեղում, էջ 8): Այստեղ Սարինյանը բերում է գրականագետ Խորեն Սարգսյանի ուսումնասիրությունները Վահան Տերյանի և Լևոն Շանթի ստեղծագործությունների մասին և ընդգծում. «Սակայն հասկացությունն իբրև գիտականորեն համակարգված տեսություն, տակավին մնում էր չիրականացած»: Սարինյանը հիշեցնում է, որ այս հարցին 1970-ական թվականներին անդրադարձել է Մոսկվայում հրատարակվող «Վոպրոսի լիտերատուրի» տեսական ամսագիրը:

Ս. Սարինյանն այստեղ կոնկրետ օրինակներով ցույց է տալիս երևույթ ներկայացնող մի քանի «իդեաներ» հայոց գրականության մեջ: Նա մատնանշում է 1863թ. ռուսերեն թարգմանությամբ լույս տեսած Թոմաս Բոքլի «Քաղաքակրթության պատմությունն Անգլիայում» աշխատությունը, որից որոշ հատվածներ տպագրվեցին «Հյուսիսափայլ» ամսագրում: Ժամանակի հայ միտքն ընկալեց այն որպես հայտնություն: Հանդես եկան Մ. Նալբանդյանը, Ղ. Աղայանը, Ռաֆֆին: Նրանց արձագանքում է «Նոր դար» ամսագիրը, որի էջերում լուսաբանվում է Կանտի, Հեգելի փիլիսոփայական ուսմունքը: Սարինյանը մատնացույց է անում հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչների երկերը: Նշում է Նար-Դոսի, Մուրացանի գրական ժառանգությունը և ընդհանրացնում. «Ես անդրադարձա հարցի մեթոդաբանական դրվածքին և կարծում եմ, եղածներն ինքնին գաղափար են տալիս գրականության փիլիսոփայություն կոչված երևույթի մասին: Բացվում է հետազոտության մի լայնատարած ասպարեզ՝ գրականության աշխարհայացքը հղելով դեպի տիեզերական կեցության առեղծվածը» (էջ 16) Աշխատությունը գրել է 2003 թվականին: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հարցի առեղծվածի ամենաակտիվ և խորիմաստ լուսաբանողը հայ իրականության մեջ հենց ինքը՝ Սարինյանն էր: Այդ են վկայում նրա «Ինչ կապ կա գրականագիտության և պետության միջև», «Նարեկը՝ անվերծանելին», «Մտավորականությունը և արդի ազգային շարժումը», «Մուրացանի վիպագրությունը», «Պատմության դասերը», «Պատմության ժամանակը» և այլ գործեր, որոնցում նա բացում է գրականության փիլիսոփայության առեղծվածային փակագծերը, ընթերցողին հասցնում հիմնախնդրի բոլոր շերտերը:

Ակադեմիկոս Ս. Սարինյանի անընդմեջ փայլատակող ուսումնասիրությունների տպագրության ու մասսայականացման ուղղությամբ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել բանաստեղծ-գրականագետ, Արցախի գրողների միության նախագահ Վ. Հակոբյանի շնորհակալ գործը: Նրա նախաձեռնությամբ Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» հրատարակչությունը տպագրեց տաղանդավոր գրականագետի 5-րդ, 6-րդ հատորները: Նրանցում զետեղվեցին «Հրանտ Մաթևոսյանի ժամանակը» «Քննադատությունը երեկ, այսօր, վաղը» հոդվածները և առանձնապես «Ի հեճուկս» հուշագրությունը (5-րդ հատոր): 6-րդ հատորում զետեղվեցին «Հայոց գրականության նորոգությունը 17-18-րդ դարերում», «Հավաքական հայրենիքի ուտոպիան», «Քննադատության առարկան և մեթոդը», «Մխիթարյանները՝ հայ գրականության պատմության հիմնադիր» աշխատանքները:

«Հայոց գրականության երկու դարը» ժողովածուի 7-րդ գիրքը լույս տեսավ 2018-ին, Երևանի «Արմավ» հրատարակչության կողմից: Գրքի նախաբանը գրել է բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանը: Նա իր խոսքը սկսում է ափսոսանքի զգացումով այն մասին, որ 2017թ. հունիսի 8-ին 93 տարեկանում կյանքից հեռացավ ՀՀ»ԳԱԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, Պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ»ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի երկարամյա վարիչ Սերգեյ Ներսեսի Սարինյանը: Նշելով մեծ գիտնականի ծառայությունը հայ գրականագիտության ասպարեզում՝ Դևրիկյանը նախ շնորհակալություն է հայտնում Սարինյանի դուստր, գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Մանե Սարինյանին՝ գիրքը տպագրելու համար:

Դևրիկյանն իր խոսքում մեջբերում է տաղանդավոր բանաստեղծ Վ. Դավթյանի հետևյալ գնահատականը. «Փոքրիկ գրախոսականի մեջ անգամ Սարինյանը կիրառում է նույն եղանակները, ձևակերպումների նույն ճշգրտությունը, ինչ գրականագիտական խոշոր աշխատությունների մեջ»(էջ 8):

Գրքի չորս բաժիններում ներկայացվել են Սարինյանի աշխատությունները գրականության տեսության, գրականության պատմության, վերահրատարակվող գրական նոր երկերի մասին գրված հոդվածներ, նաև հարցազրույցների ու երկխոսությունների մի ամբողջական հավերժախոս շարք:

Ս. Սարինյանի գրականագիտական մտքի զորության և ամենատեսության վերաբերյալ իր համաժամանակյա կարծիքն է հայտնել Մեծն Պարույր Սևակը «Ս. Սարինյանի» «Հայկական ռոմանտիզմը» մենագրության առթիվ «Հայկական ռոմանտիզմը և իր մեկնաբանը» խորագրով գրված հոդվածում: Հանճարեղ բանաստեղծն ընդգծել է. «Ոմանք (ըստ ծանոթ առածի) ծառերի ետևում չեն տեսնում անտառը, իսկ Սարինյանը գերազանց անտառատես է (եթե կարելի է այդպես ասել): Ու եթե մարդիկ, ըստ տեսողության տեսակի, լինում են հեռատես ու կարճատես, ապա պետք է ասել, որ Սարինյանը զարմանալի սուր է տեսնում հեռվից, նախանձելի ընդգրկումով է առնում խոշորն ու ամբողջականը, համընդհանուրն ու էականը» (Պ. Սևակ, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, «Հայաստան» հրատ., 1974, էջ 312):

Պ. Սևակի այս դիպուկ դիտարկում-գնահատականն առաջին հերթին վերաբերում է Ս. Սարինյանի գրականության փիլիսոփայության խորքային հասկացողությանն ու մեկնաբանությանը:

2009 թվականին Ս. Սարինյանի ծննդյան 85-ամյակի առթիվ գրել ու հրատարակել ենք «Հայ գրականության գերաստղը» գրքույկը, որտեղ կոնկրետ օրինակների հիմամբ

բարձրաձայնել ենք. «Սերգեյ Սարինյանը բացառիկ ֆենոմեններից է, միշտ անկողմնակալ, խստապահանջ: Նրա խոսքն ու զրույցը հայոց դասականների ժամանակակից տաղանդավոր գրողների հետ է՝ իր բարձրաճաշակ ու բարյացակամ դիտողություններով ու խորհուրդներով, նրա ուսումնասիրությունները հավերժական կոթողներ են, որոնցում փայլատակում է գրականության պատմաբանի, գրական քննադատի, տեսաբանի նրա ամենատես միտքը: Իր համոզիչ ու ճշմարիտ դիտարկումներով ոչ միայն գնահատում է ստեղծածը, այլև լույս է սփռում գրականագիտության առաջընթացի վրա՝ զուգորդված պատմագրության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության հիմնախնդիրներին: Սերգեյ Սարինյանի գրականագիտությունը համեմված է փիլիսոփայությամբ» (էջ 4-5):

Ս. Սարինյանի ուշադրությունից չի վրիպել Արցախի գրական ընտանիքի ստեղծագործական ընթացքը: Հայտնի են նրա հիմնարար հոդվածները Մ. Հովհաննիսյանի, Հր. Բեգլարյանի երկերի մասին: Նրան առանձնապես հետաքրքրել են Վ. Հակոբյան-բանաստեղծի նվաճումները պոեզիայի ասպարեզում համահայկական քնարերգության տեսադաշտի վրա: Պատահական չէ նրա «Հայտնության խորհուրդը կամ բանաստեղծության փիլիսոփայությունը» գիրքը Վ. Հակոբյանի պոեզիայի մասին:

Ս. Սարինյանին կարելի է համեմատել միայն հենց Ս. Սարինյանի հետ, որովհետև գրականության փիլիսոփայության մեկնաբանության ասպարեզում, հիրավի, նա գերաստղ է, որին անդրադառնալու են հայոց գրականության ու գրականագիտության բոլոր սերունդները:

РЕЗЮМЕ

Сариняновский комментарий к философии литературы

Сократ Ханян

Ключевые слова: Сергей Саринян, философия литературы, Аристотель, «Поэтика», немецкая классическая философия, Белинский, Давид Анхахт, Иполит Тэн, национальная культура, армянская классическая литература и армянская новейшая литература, сариняновский комментарий к философии литературы

Статья посвящена литературным взглядам литературоведа академика Сергея Сариняна, в частности его пониманию и оценке философии художественной литературы. Отмечается, что убеждения выдающегося ученого относительно философии литературы основываются на труде “Поэтика” античного философа Аристотеля, а также на исследованиях таких представителей классической немецкой философии, как Эмануэль Кант, Йохан Фридрих, Фридрих Шеллинг, Геворг Гегель, Людвиг Фейербах. Особое внимание уделяется взглядам Сариняна на основные положения философии искусства Иполита Тэна.

SUMMARY

Sarinyan's review of philosophy of literature

Sokrat Khanyan

Keywords: Sergey Sarinyan, philosophy of literature, Aristotle, "Poetics", classical German philosophy, Belinsky, David Anhakht, Ipolit Ten, national culture, Armenian classical literature and Armenian newest literature, Sarinyan's review of philosophy of literature

The article is devoted to the literary views of the literary critic academician Sergei Sarinyan, in particular his understanding and evaluation of the philosophy of literature. It is noted that the beliefs of the

outstanding scientist regarding the philosophy of literature are based on the work of the “Poetics” of the ancient philosopher Aristotle, as well as on the studies of such representatives of classical German philosophy as Emanuel Kant, Johan Friedrich, Friedrich Schelling, Gevorg Hegel, Ludwig Feuerbach. Special attention is paid to Sarinyan's views on the main provisions of the philosophy of art of Ipolit Ten.